

դաստանք (Եղիշ. 217): Ասոնց համապատասխան էր անոնց սնունդն ալ: Իրենք եւս կ'ախորժին՝ փափկասէր աշխարհականաց պէս ճաշէն յառաջ շարուիլ անոյշ հոտերով. «Սիրեցաք մեր զիւղ ախտալից աշխարհիս» կ'ըսէ նոյն վանական պատմիչը: Արգելուած կերակրոց եւ ըմպելեաց լաւագոյնը կը ճաշակեն. «Պարարեցաք զանձինս մեր ի զանազան խորտիկս». եւ ասոնց չափուն մէջ կը մրցին աշխարհականաց հետ. «Մրգուզք անյագք եղաք ի կերակուրս, եւ առանց չափոյ արբաք զգինի պղտորիչ խորհրդոց եւ մրտաց» (անդ):

Լոկ Եղիշէի ժամանակակիցները կամ մերձաւորք չեն այդ ամբաստանութեանց նշաւակ: Վեց դարեր կ'անցնին, եւ մեծ վկայասիրի գործակիցը Կիրակոս՝ կը հարկադրէր բողոքել տակաւին անոնց յաջորդաց դէմ, հաւատացեալներն անգամ զգուշացնելով անոնց գայթակղեցուցիչ օրինակներէն՝ եւ ըսելով. «Մի հայիցիք ի ծոյլ եւ յորովայնամոլ կրօնաստանան, եւ ընդ նոսին կորնչիցիք ի կենացն Աստուծոյ» (Հյպտ. 352): Շնորհալին նոյնը կը հաստատէր, գրելով վանականաց՝ թէ «յուլովս ունիք զնիւթ կերակրոյ եւ ընպելոյ առձեռն եւ առ տնին». եւ թէ անոնց